

Սարգիս ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅ-ՇՈՒՄԵՐԱԿԱՆ ԱՌԱՄՊԵԼԱԲԱՆԱԿԱՆ ԱՂԵՐՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Հայկական ժայռապատկերներում հանդիպում են մաս եղջերավոր կենդանիների և օձերի հակամարտությունն արտացոլող պատկերներ: Եղջերավորների և օձերի իրական հակամարտությունն իր արտացոլումն է գտել այնպիսի բառերում, ինչպիսիք են *օձակոխ*՝ «օձերը կոխկրտող (ոչխար, հորթ)», *օձահալած*՝ «օձեր հալածող» («օձահալած եղջերու»), *օձամարտ*՝ «օձի հետ կռվող» («եղջերուն օձամարտ է»):¹ հմմտ. ուղղաւորչութիւն աշոյ պարսկերէն ռաճաճ, ռաճաճ անունը (քառացի՝ «օձակեր»): Այս տեսանկյունից պակաս խոստում չեն Մովսես Խորենացու հիշատակած Պատիժահար լեռնանուն-երկրանունը և անվանակիր լեռնաշղթան ընդգրկած երկրի սեպագրային ^{KUR} Andia («երկիր Անդիա») անունը:² Հայկական լեռնաշխարհին հարավ-արևելքից հարող մերձկասպյան ալո լեռնաշղթայի և դա ընդգրկած երկրի վերաբերյալ մեր Պատմահայրը հաղորդում է, որ Պարսից Արտաշես թագավորի գահ բարձրանալուն պես «ոչ կամեցան հնազանդել մնա բնակիչք լեռինն, որ անուանեալ կոչի յիւրեանց լեզուն Պատիժահար գաւառ, որ է Գեղմանց լեռան, եւ ծովեզերեայք, եւ այսր եւս քան զնոսա»:³ Ապստամբած այս մույն տարածքի բնակչության էթնիկական կազմը պարզվում է Ստրաբոնի հետևյալ վկայության միջոցով: Նա գրում է. «Լեռների երկարությամբ, ծովից սկսած մինչև բարձունքները բնակվում են քիչ քանակությամբ աղվաններ և հայեր, և ավելի շատ գեղեր, կաղուսիներ, ամարդներ, կուրտիներ, ամարիակներ և ուրիշ զանազան ցեղեր»:⁴ Մի կողմից աղվանների (ալբանացիներ), մյուս կողմից գեղերի (գիլանցիներ) և կաղուսիների (կատիշներ) միջև բնակված հայության այս փոքր հատվածը, բնականաբար, ներկայացրել է Մեծ Հայքի արևելյան մահանգի՝ Կասպից ծովին հարող Փայտակարանի, (և նրան մերձ) հայերին: Նրանք էլ լեռնաշղթային տված են եղել հայերեն Պատիժահար անունը:⁵

Պատիժահար լեռնանուն-երկրանունը բաղկացած է **պատ-իժ-ա-հար* բաղադրիչներից: Սրանցից առաջինը մույնական է *պատ* «որմն, պատնեշ»⁶ հավաստի ստու-

¹ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» (այսուհետև՝ ՆՀԲ), հ. II, Եր., 1981, էջ 1026, Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան (այսուհետև՝ ՀԲԲ), հ. IV, Եր., 1945, էջ 606:

² Ասորեստանի Ադադներարի 3-րդ թագավորը (մ.թ.ա. 811-782թթ.) իր արշավանքներից մեկի ժամանակ հասել էր «մինչև Անդիա և Արևելքի մեծ ծով, այսինքն՝ Կասպից ծով» (Ն.Ադունց, Հայաստանի պատմություն. Ակունքները 10-6-րդ դդ. մ.թ.ա., Եր., 1972, էջ 94):

³ Մովսիսի Խորենացու պատմություն Հայոց, Եր., 1981, Բ, 80:

⁴ Strabo, XI, 7, 1 (Ստրաբոն, Քաղեց և թարգմանեց Հ.Ամառյան, Եր., 1940, էջ 34-35):

⁵ Հին պարսկերեն արձանագրությունների մեջ *patisvaris* լեռնանուն գտնելը և դա մեր Պատիժահարի հետ մույնացնելը (Մովսիսի Խորենացու պատմություն Հայոց, էջ 496, ծան. 180) բյուրի մացության արդյունք է: Իրականում խոսքը հին պարսկական *patišvar* կոչված ցեղի մասին է (տե՛ս Wilhelm Brandenstein und Manfred Mayrhofer, Handbuch des Altpersischen, Wiesbaden, 1964, S. 139):

⁶ ՆՀԲ, հ. 2, էջ 602: Այս լեռնաշղթայի հյուսիսային հատվածը բռնած երկիրը՝ Մեծ Հայքի Փայտակարան մահանգի լեռնային մասը, մաս Թալիշ է կոչվել: Կեղծ Կալիսթենեսի «Կարթ Ալեքսանդրի» երկում Կասպիական դոռները (այժմյան Սալավաթի լեռնանցքը) տեղորոշված է «մերձ յաշխարհն Թալիշ ի գաւառն Գիլմանայ» (Մ.Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 1963, էջ 58): Թալիշ անվան թալ- հինքը առնչվում է «պատ» հասկացությանը:

գարանություն չունեցող բառի հետ,⁷ երկրորդը՝ հնդեվրոպական ծագումով *իծ* «մի տե- սակ վտանգավոր օձ, բուճավոր օձ» բառն է,⁸ երրորդը՝ *-ա-* հոդակապը, իսկ չորրորդը՝ դարձյալ հնդեվրոպական ծագում ունեցող *հար* «խփել, հարվածել» արմատը:⁹ Լեոն- անվան *պատ-* բաղադրիչը կիրառված է «լեոնաշղթա» իմաստով, որովհետև հին հա- յերի պատկերացմամբ իրենց երկիրը իրենց տունն էր՝ «Հայոց տուն»-ը, նրա եզերա- կան լեոնաշղթաները հատող լեոնացիները՝ նրա «դռներն» էին, իսկ իրենք՝ այդ լեո- նաշղթաները, իրենց տան «պատները»:¹⁰ Հասկանալի է, որ «լեոնաշղթա»/«պատ» նույնացման տեսանկյունից *Պատիժահար* (<*պատ-իժահար) լեոնանունը նշանակել է «իժահարի լեոնաշղթա», այսինքն՝ «իծ խփողի» իժին հարվածողի լեոնաշղթա» (հմմտ. նույն *հար* բաղադրիչի «խփու, հարվածող» նշանակությունը *թմրկահար, փայտահար, քնարահար* բառը բառերում): Երբ ի նկատի ենք առնում «լեո», «լեոնաշղթա»/ «եղջերա- վոր էակ» առաստվարանական գոգոդդումը՝ արտացոլված Հայկական լեոնաշխարհի բազմաթիվ լեոնանուններում (հմմտ. *առն* և *Առնոս, արտի, արտիկ* և *Արտին, Արտոս, ցուլ* և *Յուլ, Յուլ գլուխ, սիրամ* և *Սրմանց*), ապա պարզ կդառնա, որ *իժահար* ըմբռնվել է Պատիժահար լեոնաշղթայի առաստվարանական դրսևորում եղջերավոր էակը:

Առաջին իսկ հայացքից նկատելի է հայերեն *անդի/անդեայ* «պաճար, արջառ, մախիր» բառի¹¹ և Պատիժահար լեոնաշղթան բռնած *Andia* սեպագրային երկրան- վան¹² արտաքին հնչյունական կապը: Հայերեն բառը Հ.Աճառյանը բխեցնում է *անդ* «այամ, շն» արմատականից՝ ինքնացս մերժելով Նոր հայկազյան բառարանում տեղ գտած դիտողությունը նրա՝ հայերեն նույնանուն, բայց «արտ» նշանակող, բառից ծա- գած լինելու վերաբերյալ:¹³ Գ.Ջահուկյանը մեր *անդի/անդեայ* «տավար» բառը ար- մատակիցն է համարում հայ. *անդ/հանդ*¹⁴ և *ընջող* «մեծ հորք», ինչպես նաև ազգակից լեզուներից իլյուր. *and-* «խոտ», կիմր. *enderic* «հորք», *enderig* «ցուլ, եզ», *anner* «երինջ», քրեռ. *оunner* «երինջ» բառերի:¹⁵ Հ.-հ. **andh-* > *անդ* արմատին մի դեպքում հավելվել է *-ի*, մյուսում՝ *-հայ* վերջածանցները: **And-ia* բաղադրիչներից կազմված լեոնանուն-երկ- րանվան մեջ առկա են նույն **and-* (<հ.-հ. **andh-*) արմատը և հիշյալ վերջածանցներից, հավանաբար, առաջինը: Հայ. *-ի* վերջածանցը ծագում է հ.-հ. *-(i)ja* մախաձևից¹⁶ և տե- դանվանական կիրառություն է ունեցել դեռևս սեպագրային ժամանակներում. հմմտ. *Albaja, Alia, Alqania, Arnija, Maldija* և այլն: Ավելի ուշ գրառված տեղանուններից են *Անի, Կարքի, Կումայրի, Հաղի, Փարպի* և այլն: *Andia* երկրանվան հիմքում ընկած «տավար» նշանակող բառը ենթադրել է տալիս, որ խոշոր եղջերավոր կենդանին տե- դական հայ բնակչության կողմից ըմբռնվել է ոչ միայն Պատիժահար լեոնաշղթայի կենդանի դրսևորումը, այլև պաշտամունքի արժանի իժահար-օձասպան տոտեմ-աստ- վածություն:

հմմտ. թաղ «պատի կամարած շարված մասը» և թաղայ (<թաղ-այ) «պատտուհան» (ՀԲԸ, հ. II, եր., 1944, էջ 78):

⁷ Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 4, եր., 1979, էջ 32-33:

⁸ Աճառյան Հ., հ. 2, եր., 1973, էջ 238-239:

⁹ Նույն տեղում, հ. 3, եր., 1977, էջ 52-54:

¹⁰ Պետրոսյան Ս., Ուրմե և Արխի երկրների տողորոշման շուրջ, «ՎՊՄԻ հանրապետական գի- տատեղովի նյութեր (նվիրված «Միացյալ և անկախ Հայաստանի անկախության մասին» հռչակագրի 90 և Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի հիմնադրման 40- ամյակին)», Վանաձոր, 2009, էջ 87-88:

¹¹ ՀԱԲ, հ. 1, եր., 1971, էջ 188:

¹² Арутюнян Н.В., Топонимика Урарту, Ер., 1985, стр. 28.

¹³ ՀԱԲ, հ. 1, էջ 186:

¹⁴ Ջահուկյան Գ., Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, եր., 1970, էջ 17:

¹⁵ Նույնի, Հայոց լեզվի պատմություն. մախագրային ժամանակաշրջան (այսուհետև՝ ՀԼՊՆԺ), եր., 1987, էջ 157:

¹⁶ ՀԼՊՆԺ, էջ 231, 355:

Գեղամա լեռների մի ժայռապատկերում այժմ ու օձը միասին են պատկերված (նկ.1):¹⁷ Բայց դա սովորական օձ չէ, այլ օձավիշապ, որը ձգվել է մինչև երկինք՝ երկնային լուսատուին կիսանելու մտադրությամբ: Հայկական առասպելների համաձայն՝ «Մի մեծ վիշապ պատել է աշխարհը՝ երկնքի և գետնի միջև: Այնքան մեծ է աղբյուրի վիշապը, որ հեռվից տեսնում է իր պոչը և կարծում է, թե դա ուրիշ գազան է»:¹⁸ Իսկ քերված Գեղամա լեռների ժայռապատկերը պատկանում է մ.թ.ա. III հազարամյակի ժայռապատկերների խմբին:¹⁹ «Էնումա էիշ» («Երբ վերևում») շումերական հեքիաթով արարական տիեզերաստեղծման պոեմի համաձայն, Աբգուն (արքա *Ապսու*) ամուսինն էր Թիամաթի (արա անունը արարելուն նշանակում է «ծով»): Սրանք, իրար խառնելով իրենց ջրերը, ծնել էին հին աստվածներին: Էնկին (արքա *Էյա*, *Հայա*)՝ աստվածների նոր սերնդի առաջնորդը, հոսուն-հստակ ջրերի անճնավորումը, սպանել էր Աբգունին, տեղում ստեղծել իր կացարանը և այստեղ էլ կյանք տվել Մարդուկին:²⁰ Ադոնիտուն Էնկին կոչվում էր «Աբգունի տեք», բայց Էրեղու քաղաքի նրա գլխավոր տաճարը պահում էր իր հին անունը՝ «Աբգունի տուն»:²¹

Էնկի-Հայան պատկերվում էր ոչ միայն ձկնամարմին (կամ ձկան պոչով) էակի տեսքով²² և Տիգրիս ու Եփրատ գետերի խորհրդանիշների հետ միասին (ռուսերից կամ ձկնորդի սափորից բխող ջրի վայրընթաց շիթերով), այլև այծագլուխ առասպելական էակի տեսքով, իսկ նրա կայուն խորհրդանիշը այժմ էր:²³ Ամենայն հավանականությամբ, այժային էությամբ օժտված Էնկին է խորհրդանշում Ուր քաղաքի արքայական գերեզմանոցի պեղումներով հայտնաբերված «Այծը թիփ մոտ» արձանիկը՝ պատրաստված *ոսկուց, լազվարդից և սադափից*:²⁴ Ընդ որում, լազվարդի մորուքը համարվում էր աստվածային նշան և նրանով օժտված էին անգամ սրբազան ցուլերի արձանիկները:²⁵ Ըստ երևույթին, լազվարդի մորուքը ջրամանուկից մորուքի հետագա վերափոխման հետևանք է և վերնուշը՝ դա կրած էակների ջրային-գետային ծագման: Այս առթիվ հիշենք հայկական հեքիաթների «Ջրերի թագավորին»: Հեքիաթներից մեկում մա հետևյալ կերպ է ներկայանում. «Ջրերու թագավոր գելմա յադրակից..., խորտա հալվոր մե, գլխուն՝ *օսկե թագ*, ուր շորեր՝ փրփուր, ուր աչքեր՝ կամանչ կթղա, ուր մորուք՝ *կամանչ մամուռ, սադափ գավազանն ի ծեռ*»:²⁶

Ջրային-գետային քնույթի Էնկի աստծու այժային խորհրդանիշներ ունենալու իրողությունը իր քացատությունը կգտնի, եթե Տիգրիսի կամ Եփրատի հոսանքն ի վեր

¹⁷ Մարտիրոսյան Հ., Գիտությունն սկսվում է նախնադարում, Եր., 1978, էջ 29, նկ. 23:

¹⁸ Ղանալանյան Ա., Ավանդապատում, Եր., 1969, էջ 407:

¹⁹ Մարտիրոսյան Հ., նշվ. աշխ., էջ 28:

²⁰ Veronica Ions, *The world's mythology in colour*, Book Club Associates, London, 1974, p. 12; D. Homès-Fredericq, *La religion en Mésopotamie de Sumer a` Babylone*, "De Sumer a` Babylone. Collections du Louvre", Bruxelles, 1983, p. 45.

²¹ D. Homès-Fredericq, նշվ. աշխ., էջ 45: В.К. Афанасьева, Абзу, "Мифологический словарь" (այսուհետև՝ МС), М., 1991, стр. 8: Եսյնի, Энки, "Мифы народов мира" (այսուհետև՝ МНМ), т. II, М., 1988, стр. 662:

²² Փշտացիների գերագույն աստվածը, որն հայտնի էր *Dagon* անունով, պատկերվում էր մարդագլուխ, մարմնի վերնամասով՝ մարդ, իսկ ստորին կեսով՝ ձուկ ("Иллюстрированная полная популярная Библийская энциклопедия архимандрита Никифора", М., 1891, стр. 182-183):

²³ Авдиев В.И., *История древнего Востока*, Л., 1953, стр. 104; D. Homès-Fredericq, նշվ. աշխ., p. 45, fig. 55; Khosro Khazal, *Les grandes étapes de l'archéologie mésopotamienne*, "De Sumer à Babylone. Collections du Louvre", p. 30, fig. 33; Афанасьева В.К., Гильгамеш и Энкиду, М. 1979, стр. 124-125, табл. XX, рис. А; МНМ, т. II, стр. 648 рис., стр. 651 рис., стр. 662 рис.; "История древнего Востока", под ред. В.И. Кузищина, М., 1979, стр. 178.

²⁴ "Le Berceau de l'humanité. Les grandes étapes de l'humanité", Genève, 1976, p. 102, fig. 147.

²⁵ Mallowan M.E., *L'aurore de la Mésopotamie et de l'Iran*, Éditions sequoia, Paris-Bruxelles, 1966, p. 94, fig. 102.

²⁶ «Հայ ժողովրդական հեքիաթներ», հ. X, Եր. 1976, էջ 19:

հասնենք այս աստծու նախատիպ աստվածության քննարան՝ հնդեվրոպական ցեղերի նախահայրենիք Հայկական լեռնաշխարհ: Էնկին այծային գծեր ունեն նախ և առաջ կենսատու-պտղաբերող հոտում ջրերն անձնավորելու պատճառով: Հին հնդեվրոպացիների ընկալմամբ՝ տղամարդը և արու եղջերավոր կենդանիները «հոսեցնողներ» էին: Հայերեն *առն* «վայրի խոյ» բառը ծագում է հ.-ե. **r̥sen-* կամ **uersen* նախածնից, որից են նաև հետևյալ բառերը. հուն. **ar̥sen* «խոյ», հին հնդկ. *r̥sabho-*, *v̥r̥śa* «ցուլ»: Դրանց հիմքում տեսնում են կամ հ.-ե. **eres-* «հոսել, քացություն», կամ **uers-/u̯rs-* «լցնել, հեղել» արմատը (հմմտ. հին հնդկ. *ar̥sati* «հոսել», *var̥sati* «անձրև տեղալ», *var̥ša-* «անձրև», հուն. **ēros*, լատին. *rōs* «ցուլ, խոնավություն» և այլն):²⁷ Այս արմատով կազմված դիցանուններից են փռուզական հնձի և հացահատիկային բույսերի հովանավոր, որկրամուլ Լիսյուեռսի անունը. *Λιτσερσοας* (<*Lit-*uers-*)²⁸ և, մեր կարծիքով, Արարատյան դաշտի ուրարտական դարաշրջանի աստվածություններից Իվարշայի (*I-O-ur-ša-a*)²⁹ անունը:³⁰ Հ.-ե. **uers-*ի ստորին **u̯rs-* ձայնդարձից կունենանք **u̯ars-* ձևը, որից՝ *ի* նախդիր-նախածանցով՝ **i̯u̯ars-*: Հ.-ե. **u̯rs-* > հայ. **վարշ* հմմտ. *բարշամ, բորշում* < հ.-ե. **r̥rs-* «չորանալ, ցամաքել»:³¹ Նույն **վարշ* արմատն է առկա հին հայկական *Վարշակ* (<**վարշ-ակ*) տեղանվան մեջ, որը Տատեռն ավանի (այժմյան Դիադինի) մոտ գտնվող ջերմուկների վայրի անունն էր:³² «Այծ»/«հոսեցնող»/«զետ» առասպելաբանական գուգադրումների տեսանկյունից ուշագրավ են «այծային» ստուգաբանությամբ հայկական գետանունները: Հիշենք, *Դկլաթ/Դկղաթ* <Diglat<Dignat. հմմտ. հ.-ե. **dig-* «այծ»), *Քաղիք* (հմմտ. *քաղ* «արու այծ»), *Տեկոթ/Տիկոթ* (հմմտ. *տիկ* <հ.-ե. **dig-* «այծ»), *Շորոխ* (հմմտ. *ժորդուր* «եղջուր» և *ժառ* «մրբանագ այծի տեսակ»):³³ Առավել ուշագրավ են Հայկական պար լեռնաշղթայի արևմտյան հատվածի *Ջրարաշխ* («ջուր բաշխող») անունը և նրա գագաթներից մեկի *Քոշասար*³⁴ (<*քոշ* «արու այծ + *ա* + *սար*) անունը, մանավանդ, երբ դրանք դիտարկում ենք փոխադարձ կապի մեջ:



նկ. 1

Էնկի-Հայա աստծու այծակերպ ընկալման պատճառներից մեկն էլ կարող է լինել այն, որ եղջերավոր կենդանիներից հենց վայրի այծերն էին տերը լեռնային բարձունքների, որտեղից էին սկիզբ առնում Հայկական լեռնաշխարհի գետերը, դրանց

²⁷ ՀԱԲ, հ. I, Եր., 1971, էջ 261: Гамкрелидзе Т.В., Иванов В.В., Индоевропейский язык и индоевропейцы (այստիսևս՝ ИЯИ), т. I-II, Тб., 1984, т. II, стр. 566, 680.

²⁸ Неразник В.П., Палеобалканские языки, М., 1978, стр. 150.

²⁹ Այս աստվածության տեղական ծագման վերաբերյալ տես Ն. Բրյուսյան, *Новые урартские надписи*, Ер., 1966, стр. 17, 94.

³⁰ Պետրոսյան Ս., «Շարայի ցեղամիությունը» Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում, «Լրագիր հասարակական գիտությունների», 1979, թիվ 12, էջ 73:

³¹ ՀԱԲ, հ. II, էջ 155:

³² Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 85:

³³ Պետրոսյան Ս., Դրախտի գետերի և Խալիլա, Քոշ երկրների տեղադրության շուրջ, «Պատմա-բանասիրական հանդես», 2006, թիվ 2, էջ 243-246:

³⁴ «Հայ ժողովրդի պատմություն», հ. I, Եր., 1971, էջ 19:

թվում նաև Տիգրիսն ու Եփրատը: Ի նկատի առնենք նաև, որ հայկական հնագույն ցեղերից շատերի տոտեմ կենդանին եղել է քարայծը (վկայ՝ Հայաստանի «իծագրեր»-ժայռապատկերները), իսկ քարայծերի հոտի առաջնորդ քոշը տոտեմական մախատիպն է եղել մեր աստվածային մախսնի Հայկի:³⁵ Էնկի-Հայա աստծու և նրա շրջապատը կազմած առասպելաբանական կերպարների սերտ կապը ինչպես ջրային տարերքի (Տիգրիսի և Եփրատի), այնպես էլ լեռնային բարձունքների եղջերավոր բնակիչների (քարայծերի) հետ իր արտահայտությունն է գտել նաև նրանում, որ Էնկին համարվում էր շումերների գերագույն աստված Էնլիլի որդին: Վերջինիս հայտնի խորհրդանիշը եղջերավոր խույրն էր,³⁶ կացարանը՝ երկինքն ու երկիրը իրար միացնող բարձր լեռը, ինքը՝ Էնլիլը կոչվում էր «Մեծ լեռ» (KUR. GAL), իսկ իր գլխավոր տաճարը Նիպալում՝ «Ղեռան տուն» (E.KUR):³⁷

Էնկիի և Աբգուի առասպելաբանական առնականման մեջ իրենց արտացոլումներն են գտել ինչպես այծի և օձի իրական հակամարտությունը, այնպես էլ ջրային տարերքի երկու՝ իրար անհարկ տեսակներ հանդիսացող հոտոմ-քաղցրահամ և մեռյալ-աղի (հողագործի տեսանկյունից) ջրերի հակադրումը: Իրական-առասպելաբանական այս հենքի վրա էլ Աբգու (Abzu) դիցանվանը «ջրային-օձային» բնույթ կարելի է վերագրել: Մեր կարծիքով, այս դիցանունը բաղկացած է ab-zu բաղադրիչներից, որոնցից առաջինը «ջուր» և «գետ» է նշանակում, իսկ երկրորդը պարամական է «Ստորին աշխարհի» (ընդերքի) լակին բնորոշող մի իմաստ: Abzu < *ab-zu դիցանվան -zu բաղադրիչը կարելի է բխեցնել հ.-ն. *g hu- արմատից, իսկ ab- բաղադրիչի հիմքում տեսնել հ.-ն. *ab/*Hab(h)- արմատը: Հմմտ. վերջինս իրենց հիմքում ունեցող թրակյան 'Aβα ջրահարսի անունը և փոքրասիական 'Aβος, լիովական Abista, լատիշական Abava, բրիտական Abos և այլ գետանունները:³⁸ Մարդկության պատմության ամենավաղ ժամանակներից սկսած՝ «օձը թաքուի էր ենթարկված և ամեն մի լեզու մի կերպով աշխատել է խուսափել բուն անունից կա՛ն այլափոխելով, կա՛ն մի նոր անուն հնարելով»:³⁹ Այս տեսանկյունից ուշագրավ է օձի բուն անվանը փոխարինած հ.-ն. *g hu- արմատը, որն հատկացված է եղել նաև ձկանը. *ձուկն* < *g hu-, որին հավելվել է *-կն* մասնիկը (հմմտ. *արմուկն*, *կրուկն*, *մուկն*, *ուկն*):⁴⁰ Մրա արմատակիցներից են նույնպես «ձուկ» նշանակող հուն. *ἰχθύς*, պրուս. *suckis*, լիտվ. *žuvis* բառերը:⁴¹ Abzu դիցանվան -zu բաղադրիչի *ձ*-ով արտասանության օգտին կարող է վկայել սեպագր. *Alzi*, *Alzini* ձևերի դիմաց *Աղձնիք* (<*աղձինի-ք) ձևի գոյությունը: Հ.-ն. *g hu- արմատի ոչ միայն ձկանը, այլև օձին հատկացված լինելու տեսանկյունից ի նկատի առնենք, որ *ձուկը* և *օձը* համարվում էին «Ստորին աշխարհի» բնակիչներ՝ ընդերքային լակներ:⁴² «Չուկ» և «օձ» հասկացությունների մերձավորության մասին է խոսում հայ. *օձաձուկ* բառը, որը գրաբարում ոչ միայն ձկան տեսակ էր նշանակում, այլև օձի տեսակ:⁴³ Նույն բանն են ցույց

³⁵ Պետրոսյան Ս., Հնագույն Հայաստանի գլխավոր աստվածությունների շուրջ, «Հայաստանի էկոլոգիական հանդես», Եր., 2003, թիվ 2, էջ 125-131: Նույնի, Հայոց մեհենագրության ակունքներում, Գյումրի, 2008, էջ 15, 18-19:

³⁶ Khosro Khazai, *նշվ. աշխ.*, էջ 42, նկ. 52, p, MHM, m. II, *cmp.* 651 *pus.*

³⁷ Аведнев В. И., *նշվ. աշխ.*, էջ 105:

³⁸ Гиндин Л. А., Некоторые ареальные характеристики хеттского. II. "Этимология 1972", М., 1974, *cmp.* 153.

³⁹ ՀԱԲ, հ. IV, էջ 611-612:

⁴⁰ ՀԱԲ, հ. III, էջ 160:

⁴¹ Նույնը:

⁴² ИЯЯ, m. II, *cmp.* 535-536.

⁴³ Հովհաննիսյան Լ., Գրաբարի բառարան. Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր, Եր., 2010, էջ 292:

տալիս նաև լոկ «զորառու օձ»⁴⁴ և լոր, լորճ բառերը (վերջինս խոշոր, մեծագույնս և լայնաբերան ձուկ է)։⁴⁵

Ուշագրավ է, որ Արգուի մյուս անունը՝ Եոգուր-ն,⁴⁶ ևս նույնպիսի լեզվամտածողության արդյունք է։ Նրա հիմքում մենք տեսնում ենք *eogur- նախաձևը՝ բաղկացած հնդեվրոպական ծագումով *eog- արմատից և -ur վերջածանցից։ ՀԱճառյանը նկատել էր տալիս, որ հնդեվրոպական ծագում ունեն ինչպես մեր հժ և օձ բառերը, այնպես էլ ազգակից լեզուներում «օձաձուկ» նշանակող մի խումբ բառեր։⁴⁷ Դրանցից են լատին. anguilla, միջ. իտլ. esc-սոց (քառացի՝ «ջրօձ») լիտվ. angurys, պրուս. angurgis, ռուս. угорь։⁴⁸ Հնդեվրոպական նախաձևին առավել հարագատ մնացած հայերեն բառը ընգղայ-ն է, քայց որը նշանակում է «ծովային առասպելական մի հրեշ» և համարվում հավաստի ստուգաբանություն չունեցող բառ։⁴⁹ Անտաբակույս, ընգղայ <*ինգ-իդ-այ, որտեղ *ինգ- <h. h. *eog- (սրանում առկա -իդ և -այ վերջածանցների համար հմնտ. բռռեղ, գռռեղ, մաթիլ, որջիլ, արբայ, հորայ, մորայ և այլն), իսկ Եոգուր <*eogur <*eogur-ur (հմնտ. բլուր, քաղքաքուր, փշուր և այլն)։

Արգուի ինչպես ջրային, այնպես էլ ընդերքային էակ ըմբռնվելու և օձին ու ձկանը քնորոշ գծեր ունենալու մասին է խոսում հայկական առասպելաբանությունից հայտնի վիշապաձկան՝ նույն Ընգղայի նույնպիսի ընկալումը։ Սրան իր միջավայրում է պատկերում Նոր քարի դարաշրջանի սկզբով թվագրվող Գեղամա լեռան ժայռապատկերներից մեկը (նկ. 2)։⁵⁰



նկ.2

Ժայռապատկերի կենտրոնի փոքր շրջանակը արևի պատկերն է, եզրային մեծ շրջանակը՝ տիեզերական օվկիանոսն է, իսկ առ երկուսի միջև պատկերված է գալարված վիշապաձուկը (օձաձուկ)։ Կենտրոնական պատկերից ձախ պատկերված է աջ ձեռքին զենք ունեցող մի արական աստվածություն (մերկամարմին է) իսկ կենտրոնական պատկերից աջ՝ ինչ-որ գազան, որը ևս աստվածության մնացած պատրաստ է հարձակվելու վիշապաձկան վրա։ Տիեզերական վիշապաձկան վերաբերյալ պատմված առասպելներից առավել ամբողջական տեսք ունի Ջավախքում գրի առնված հետևյալ տարբերակը։ «Առ ձուկը անքան էրկան է, օր ինքն իրեն պոչը չի ճանչէ, գիտե թե ուրիշին է, միշտ կենե թե բռնե... Եփոր ատիկ պոչը բռնե, աշխարհս վար պիտի անցնի։ Աս ձուկը դաֆատ դոճա (ափսոս) սարին բոլորտիքը պըտըտի կը։ Վեց ամիսը ժուրն (մի անգամ) մե պտուտըն կենե։ Եփոր պտըտի պըծնի կը՝ անոթնա կը, բանա կը բերանն ու ազըն (րավականին) ջուր կուլ կուտա, ետև դունչը դնե կը սարին, ջուրը թափե կը (մեաեղ) սարի գլխը։ Թափե կը սարի գլխը թը չը՝ սարի գլխեն սեղաֆ՝ն (հեղեղ) պըծնի, ծառ, քար, գալ, առջ, ասլան (առյուծ), ինչ օր ռառո գուգա՝ քչի բերե ատ ձկան բերանը

⁴⁴ ՀԲԲ, հ. II, էջ 206:

⁴⁵ Նույն տեղում, էջ 225, ՀԱԲ, հ. II, էջ 305:

⁴⁶ Афанасьев В.К., Абзг, стр. 8.

⁴⁷ ՀԱԲ, հ. IV, էջ 611-612:

⁴⁸ ИЯИ, т. II, стр. 526.

⁴⁹ ՀԱԲ, հ. II, էջ 122.

⁵⁰ Սարգսյան Ս., Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Եր., 1967, էջ 117, աղ. XXIII:

լուի կը (լցնում է): Չուկը ուտելունը կուտե, մնացածը առկները խփե ու ֆնչալին դուս փչե կը (փչե): Սամի քամին (սամում) ինչ է, օր Մեռած ծովի դրադեն (կողմից) փչե կը, ըշտը (հենց) ատ ձկան շունչն է»:⁵¹

Այս և առասպելի այլ տարբերակներում նախաստեղծ էակը կամ ուղղակի ձուկ է կոչվում, կամ *վիշապ*:⁵² Նրա շարժումներով են բացատրվել այնպիսի տարերային բացասական երևույթներ, ինչպիսիք են երկրաշարժը, լեռներից իջնող հեղեղները, կայծակ-փայլակը, չար հողմը (հմմտ. *ձկնամբ<ձուկն-ամբ*՝ «թաթառ, պտուտահողմ, փոթորիկ»՝ կոչված նաև *վիշապ, սատանի քամի*):⁵³ Աշխարհը պատռող օվկիանոսում բնակված և մարմնացյալ Արգուի հետ ընդհանուր նախատիպ ռենցած այս վիշապա-ձուկը, ըստ երևույթին, վիշապամարտ աստծուց պարտություն կրելով, ի տարբերություն Արգուի, չէր սպանվել, այլ մղվել էր մարդկության բնակության տարածքից հեռու՝ տիեզերքի եզրամաս, որպիսին կարող էին մեր հեռավոր նախնիները համարել Հայկական լեռնաշխարհին համեմատաբար մոտ 4 ծովերի՝ Մև, Կասպից, Միջերկրական ծովեր և Պարսից ծոց ամբողջությունը (հմմտ. բնակելի տիեզերքը բուրբոլ չորս «հաղորդակից» ծովերի մասին առասպելաբանական պատկերացումը):

Էնկի աստծու «ջրային» բնույթին առնչվող միակ կերպարը չէ Արգուն, որ շումերական առասպելաբանության մեջ հնդեվրոպական-հայկական հետք է մատնանշում: Այդպիսիք են նաև ուրիշ մի շարք կերպարներ: Դրանց մեջ առաջինը Էնկիի որդի Ասալդուխի/Ասալդուխին է՝ հետագայում մույնացված քաղեղմյան Մարդուկ աստծուն:⁵⁴ Նա դիվահալած, պահապան և բուժիչ աստված էր:⁵⁵ Նրա անվան հնդեվրոպական-հայկական տուրգաբանությունը իր պաշտամունքային կենտրոն Կուառա քաղաքի⁵⁶ անվան հայկական գուգահեռների հետ միասին⁵⁷ խոսում է Ասալդուխի նախատիպի հայկական արմատների մասին: Asaldubhi<*as-ald-ubhi դիցանվան առաջին բաղադրիչը, մեր կարծիքով, ծագում է հ. ե. *ans-(*H₂s-) «տեղ, տիրակալ» արմատից: Այս արմատն ընկած է ժառանգ լեզուների մի շարք բառերի հիմքում՝ խեթ. *haššu-* «արքա», ավեստ. *ahm-* «տեղ», *ahura-* «տիրակալ, տեղ, իշխող», հին հնդկ. *nsura-* «աստվածություն, ոգի», հին իսլ. *ass* «աստված», և առկա է հին իրանական *Ahura-Mazda* (բառացիորեն՝ «Տեղ իմաստուն», Արամազդ) դիցանվան մեջ: Հայերենում այս հնդեվրոպական արմատը օրինակաբար վերածվել էր **աս-ի* առկա *Աստուած* (*աս-տիւ-ած) և այլ բառերում:⁵⁸ Քանի որ Asaldubhi-ն դիցանուն է, ապա նրա անվան *as-* բաղադրիչը համարժեքն է լինելու շումերական *Enki, Enlil, Enmesarra* և այլ դիցանունների բաղադրիչների (դրանք ևս «տեղ. տիրակալ» են նշանակում):⁵⁹

As-ald-ubhi դիցանվան երկրորդ բաղադրիչը, ըստ երևույթին, արտացոլում է հ. ե. *eld-/*ld- «բաց» արմատը, որի ժառանգն է առկա հայ. *եղտիլը/աղտիլը* բառում:⁶⁰

⁵¹ Ղանալանյան Ա., *Ուշվ. աշխ.*, էջ 129:

⁵² Լալայան Ե., *Երկիր, հ. I, Եր., 1983, էջ 392: Ղանալանյան Ա., Ուշվ. աշխ.*, էջ 129-130, 407-409:

⁵³ ՀԱԲ, հ. III, էջ 159, հ. IV, էջ 341, ՀԲԲ, հ. II, Եր., 1944, էջ 74, հ. III, Եր., 1944, էջ 177:

⁵⁴ Афанасьева В.К., Мардук, МНМ, т. II, стр. 110. Նույնի Асалухи, МС, стр. 64. Նույնի, Энки, МС, стр. 662.

⁵⁵ Նույնի, Асалухи, стр. 64. Նույնի, Мардук, стр. 110. Նույնի, Энки, стр. 662.

⁵⁶ Նույնի, Асалухи, стр. 64.

⁵⁷ Պետրոսյան Ս., Պետրոսյան Լ., Կարմիրբլուրյան Դ. AMAR.UTU և Կուեռա-Կուառ աստվածությունների առնչության մասին, «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը», միջազգային ութերորդ գիտական մատաչքանի նյութեր, Եր., 2010, էջ 67-69:

⁵⁸ Ջահուկյան Գ., Հայկական շերտը ուրարտական դիցարանում, «Պատմա-բանասիրական հանդես», 1986, թիվ 1, էջ 52: Պետրոսյան Ս., Հայոց մեհենագրության ակունքներում, էջ 12-14:

⁵⁹ Дьяконов И.М., Города-государства Шумера, "История древнего мира. I. Ранняя древность", М., 1989, стр., 64; Афанасьева В. К., Гильгамеш и Энкиду, стр. 112, пр. 3.

⁶⁰ ՀԼՊՆԺ, էջ 121:

(նշանակում է «մաք գրաբրի և խաղ գետոյ»)»⁶¹ և Հրազդան գետի սեպագիր Ուսարունա (<*eld-arun-ia) անվան մեջ (սրա-arun- բաղադրիչը հմմտ. *առա* բառի և սրանից ծագած *Առուն* գետանվան հետ,⁶² իսկ -ia բաղադրիչը՝ -ի վերջածանցի հետ, որոնք ևս հնդեվրոպական ծագում ունեն): Նույն արմատի ա-ով տարբերակն է առկա սեպագրային *Ma-qaltuni* <*Maq-alt-uni տեղանվան մեջ⁶³ (մեռկայիս Կարսից հյուսիս), խեթերեն *aldanuni* // *aldanuni* «ակունք, աղբյուր», «ջրհոր» բառում⁶⁴ և այնպիսի գետանուններում, ինչպիսիք են հայկական *Աղաբա*-ն (Մեղրու շրջանում), *Աղա*-ն (Վայոց ձորում), *Աղդան*-ը (Իջևանի շրջանում), *Աղտաղտ*-ը (Կարինի շրջանում),⁶⁵ փոքրասիական *Alda*-ն, մակեդոնական *Αλτος*-ը, իլյուրական *Alto*-ն, Դանուբի ավազանի *Altina*-ն և այլն:⁶⁶

Հնդեվրոպական ծագում ունի նաև *As-ald-uhi* դիցանվան երրորդ՝ *uhi*, բաղադրիչը: Հայտնի է, որ սեպագրային *u*-ն կարող էր արտացոլել նաև *o* հնչյունը: Ըստ այսմ, դիցանվան այս բաղադրիչը մեք մայնական ենք համարում հայերեն *ու*ս բառի մույնածագում, մույնահունչ, բայց այլիմաստ տարբերակի հետ: Ուս «քեն, վրեժխնդրություն» բառը ծագում է *h-u*. *ok⁶⁷ «տեսնել», «այք» նախածնից,⁶⁷ որի տարբերակից է նաև *ակն* «այք» (եռզն. *ակունք*) բառը: Վերջինս գործածվում է նաև «աղբյուրի քիսած տեղը, ջրի այք» նշանակություններով (հմմտ. պարս. *շաշմե*, արաբ. 'ayn, եբր. 'ayin, ասոր. ܐܝܢ, վրաց. *բվայի* «այք, ակունք, աղբյուր»):⁶⁸ Նույն երևույթի ակամատեսն ենք նաև *ու*ս տարբերակի դեպքում. տեղի է ունեցել «այք», «ակունք» > «գետ» իմաստաբանական տեղաշարժը. հմմտ. Դոբոլս (<* Դոբ-ոլս) գետանունը, ջուր խմելիս, լողանալիս հաճույք արտահայտող *ոլսա~յուլսա~յ* բացականչությունը և *Օխայ* (<*Ոխ-այ) հեքիաթային ջրաբնակ ոգու անունը: Վերջիններիս **ու*ս/**ուլ*ս բաղադրիչների «ջրային» բնույթի վկան է նաև դրանց **ալ*ս տարբերակի առկայությունը *Ախտրեան* գետանունում (>սեպագր. *Aħuriāni* տեղանունը) և *Անճախ*, *Օնճախ* գետանուն-ծորանուններում:⁶⁹ *Asalduhi* դիցանվան *uhi* բաղադրիչը ևս, ըստ երևույթին, «ակունք» է նշանակել, իսկ դիցանունն ամբողջությամբ ունեցել է «տեղը ջրերի ակունքի» իմաստը:

Էնկի-Հայա աստծուն առնչվող ջրային բնույթի առասպելաբանական կերպարներից էին *արգալա* (արաղ. *արկալալու*) կոչված ոգիները: Էնկիի այս ենթակաները

⁶¹ ՆՀԲ, հ. I, եր., 1979, էջ 45, 657: Հմմտ. «Աղտաղտուկ-շոռ տեղի» և «Եղտիւր-տեղի գիջի, կամ ծծինք ջրոյ, կամ փոքր աղբիւր» («Բառագիրք հայոց», Ջմնական բնագիրք, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Ամսյանի, եր., 1975, էջ 13, 88):

⁶² Երեմյան Ս., *նշվ. աշխ.*, էջ 38, 46:

⁶³ Պետրոսյան Ս., Պետրոսյան Լ., Պատմական իրականության արտացոլումը հնագույն Վանանդի մի քանի տեղանուններում, Գյումրիի Մ.Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի համրապետական գիտական նստաշրջան. *գեկուցումների հիմնադրություններ*, Գյումրի, 1999, էջ 14-15:

⁶⁴ ИЯИ, т. II, стр. 862, 945.

⁶⁵ Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. I, եր., 1986, էջ 72, 77, 168, 169, 198:

⁶⁶ ИЯИ, т. II, стр. 862, 945.

⁶⁷ Джаукян Г., Очерки по истории дописменного периода армянского языка, Ереван, 1967, стр. 122, 271.

⁶⁸ ՀԱԲ, հ. I, էջ 106-108:

⁶⁹ Պետրոսյան Ս., Պետրոսյան Մ., Պետրոսյան Լ., «Ջրերի զավակի» պաշտամունքի արտացոլումը սեպագրային մի քանի տեղանուններում, ՀՀ ԳԱԱ ԸՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. I, Գյումրի, 1998, էջ 77-79: Ըստ երևույթին ջրաբնակ ոգուն մույն արմատի ախ տարբերակով էլ են կանչել: Վերը նշված հեքիաթում նա «ետուրնիկ հրեղեն» էակ է, անունը Լուսեղեն: Հեքիաթային հերոսը, երբ սարի աղբյուրի մոտ «կը կզի ջուր խմն, կենն «ա խ»։ - Ջու ճ, - կըսն աներևույթ ձեն մն»։ Տղայի հարցին, թե ով էր դա ասողը, ջրաբնակը պատասխանում է. «Չը լսե՞ր իս, ընձի Լուսեղեն կըսին, ես Ջրերու թագավորի աղջիկն իմ, հըստ իմ մամուն ու պապուն կը բնակոյիմ մըջ յաղրական» (էջ 17-20):

բնակվում էին Արգուում, մշակութակիր էակներ էին և հայտնի շինարարներ:⁷⁰ Abgala դիցանունը կարելի է արոհել ab- և -gala բաղադրիչների, դրանցից երկրորդի հիմքում տեսնելով հ.-ն. *gel- «կուլ տալ, լափել» արմատի ստորին *gl- ձայնդարձը: Միջին ձայնդարձից ունենք հայերեն *կուլ* «կուլ տալու գործողությունը» արմատը և *կուղը* «ջրշում» բառը:⁷¹ Ըստ երևույթին, դիցանվան մեջ այն կիրառված է «շում» նշանակությամբ: Հ.-ն. *gl-ից սերած պետք է համարել հայերենի օրինաչափությամբ **կալ* տեսքն ստացած արմատը՝ առկա *կալոշ* (<**կալ-աշ*. վերջածանցը հմմտ. *դոլոշ*, *թոթոշ*, *դամդալոշ*, *լմիոշ* և այլն) բառում: *Կալոշ* նշանակում է «մեծ շում, գամփռ»:⁷² Նույն այս արմատն առկա է նաև *կաղկանձել* «շում ծագի վնկվնկալը, աղերսական ձայնով հաչելը», «(շների) կնձ-կնձալ, լալ, վնկվնկալ» բառում (*կաղ-կանձ-ել* հմմտ. *կնձ-ա-ձայն*)⁷³ որտեղ ևս *կալ-կաղ*-բաղադրիչը «շում, շան ծագ» է նշանակել: Ըստ այսմ, Abgala դիցանունը բառացիորեն «ջրշում» է նշանակում, բայց վերաբերում է կուղին և ջրսամույրին. հմմտ. հայ. *շում* և *ջրշում* «կուղը», պարս. sag «շում» և sagābi «կուղը, ջրսամույր» (բառացի՝ «ջրային շում»),⁷⁴ հին իռլ. cū «շում, գալլ» և dobor-chū «կուղը» (բառացի՝ «ջրի շում»):⁷⁵

Էնկի-հայա աստծուն ենթակա արգալանների կուղը և ջրսամույր մախատիպեր ունենալու ամբիվ հիշենք, որ նրանք ջրմակ ոգիներ էին, բայց նաև շինարարներ (ինչպես կուղերբը), իսկ նրանցից Ադապան հայտնի ձկնորս էր (ինչպես ջրսամույրը) և մշտապես ծուկ էր մատակարարում ոչ միայն իր հոր՝ Էնկիի Էրեդու քաղաքի տաճարին, այլև ամբողջ քաղաքին:⁷⁶ Արգալանների անվան հնդեվրոպական ստուգաբանությունը խոսում է նրանց մախատիպերի ձևավորման մասին փառքամ անտառներով և ձկնառատ վճիռ ջրերով մի այնպիսի երկրում, ինչպիսին էր հնդեվրոպական ժողովուրդների մախահայրենիքը՝ Հայկական լեռնաշխարհը:⁷⁷ Այստեղ կուղը պաշտամունքի առարկա է եղել մախ և առաջ իր աճուկի մեջ պարունակող հուսավետ նյութի պատճառով: *Կուղրի ձու* կամ *կորածու* կոչվածը «կուղրի ծննդական գործարանների խուլներում գոյացող հեղուկ նյութ է, որ գործ է դրվում բժշկության մեջ ալլ և ալլ հիվանդությունների դեմ (Castoreum)»:⁷⁸ Մեր մախնիներին այդ իրողությունը հայտնի է եղել հազարամյակներ առաջ: Վան քաղաքից արևելք հայտնաբերված Մենուա թագավորի (մ.թ.ա.810-786թթ.) արձանագրությունից պարզվում է, որ նա այստեղ բուժարան է կառուցել:⁷⁹ Իսկ գյուղի *Կողրանց*/**Կողրանց՝* «կուղերին» անունը արդեն խոսում է ինքն իր մասին: «Կուղը» նշանակող հիմքով կազմված է մի շարք տեղանուններ կամ Հայկական լեռնաշխարհում: Այդ տեղանուններից են. *Կողր/Կողրաքար*, *Կողրայ գետ*, *Կողրոփոր* (արևելյան Գուգարքում), *Կողր* (Ղակք Մասյացոտնում), *Կողրենիք* (Արարկիի շրջան, Փոքր Հայքում)⁸⁰ և այլն:

⁷⁰ Афанасьева В.К., Абзу, МС, стр. 8.

⁷¹ ՀԱԲ, հ. II, էջ 655: Կուղը բառն համարվում է փոխառյալ «ասորի մի այնպիսի գավառական ձկնից, որ ուներ ու ձայնավորը» (նույնը, էջ 657), բայց կուլ արմատի հետ նրա ունեցած ծագումնաբանական կապը բացառում է այդ հնարավորությունը:

⁷² ՀԲԲ, հ. II, էջ 365:

⁷³ ՀԱԲ, հ. II, էջ 496, ՀԲԲ, հ. II, էջ 371:

⁷⁴ "Персидско-русский словарь", т. II, М., 1970, стр. 51.

⁷⁵ ИЯИ, т. II, стр. 530, нр. 1, стр. 590.

⁷⁶ Афанасьева В., Адапа, МС, стр. 20.

⁷⁷ Մարդարյան Ս., նշվ. աշխ., էջ 104: Ընդգամիթի պեղումներից հայտնաբերված գետային կուղրի ծնողը «փաստական ապացույցն է այն բանի, որ հնում՝ Նեոլիթում և Էնեոլիթում, Հայաստանի տերիտորիայում բնակվել են կուղրեր» (նույն տեղում, էջ 103):

⁷⁸ ՀԲԲ, հ. II, էջ 446:

⁷⁹ «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա», հ. I, Եր., 1981, էջ 51:

⁸⁰ Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 48, 59, 60, 104, 110:

տեսանկյունից հատուկ ուշադրության է արժանի ավեստյան Արդվիսուրա-Անահիտա դիցուհու տոտեմական մախսատիպերից մեկի կոտորը լինելու հանգամանքը: Սա իր արտացոլումն է գտել «Ավեստա»-ի յաշտերից մեկի հետևյալ տողերում.⁸⁷

Կոտորի մորթիներ է հագել
Արդվիսուրա Անահիտան՝
Երեք հարյուր էգ կոտորների,
Չորս անգամ ծնածնների:⁸⁸

«Ավեստա»-ի լեզվում կոտորը կոչվում է bawra/bawrō, իսկ այդ բառի հիմքում հ.-ն. *bhero- «գորշ, բուխ» արմատն է, որից է մակ հայերեն *բորենի* (բորեան, բորէ) բառը (հմմտ. բարբառային *բորանի* «բորենու մորթուց շինված մուշտակ»):⁸⁹ Բավրա անունով գյուղ ունենք ոչ միայն մախկին Աշոցքում, այլև ունեցել ենք լճառատ Ջավախքի տարածքում:⁹⁰ Ամենայն հավանականությամբ ավեստյան իրանցիները կոտորի պաշտամունքը յուրացրել էին դեռևս հնդեվրոպական մախսահայրենիքում (Հայկական լեռնաշխարհը՝ հարակից շրջաններով), երբ բնակվում էին հայկական ցեղերի հետ կողք կողքի, իսկ իրենց մոր հայրենիքում հաստատվելուց հետո այն պահպանել էին որպես Արդվիսուրա-Անահիտա դիցուհու պաշտամունքի բաղադրիչ: Ըստ այսմ, բացառված չէ, որ հնդեվրոպական-հայկական էթնոսի ինչ-որ հատված մույն կերպ կոտորի պաշտամունքը Հայկական լեռնաշխարհից տարել և հասցրել էր հարավային Միջագետք՝ Շումեր:

Վերոշարադրյալը, քիսելով հայկական և միջագետքյան առասպելաբանական նյութի տիպաբանական և լեզվաբանական վերլուծություններից, մեկ անգամ ևս ցույց է տալիս, որ շումերաքաղական առասպելաբանության առանձին կերպարների և դրանց հարակից նյութի խորքային շերտերի բացահայտումն ու իմաստավորումն անհնար է մինչև վերջ իրագործել՝ առանց հաշվի առնելու հասկացությունների այն զուգորդումներն ու համադրումները, որոնք ծնվել են Հայկական լեռնաշխարհում, մեր հեռավոր մախկինների երևակայության մեջ և արտացոլվել հայի առասպելաբանական պատկերացումներում ու լեզվում:

ОБ АРМЯНО-ШУМЕРСКИХ МИФОЛОГИЧЕСКИХ ОТНОШЕНИЯХ

____ Резюме ____

____ С.Петросян ____

Шумерский бог пресных вод Энки//Айа часто изображается с символами Тигра и Евфрата. Козел постоянный символ, а также прототип этого козлоголового бога. Дело в том, что по представлениям древних индоевропейцев самцы рогатых животных являются "изливателями": и.-е. 'rsep- "изливать" > "мужский" > арм. *шпн* "самец дикого барана", др. перс. *аган* "самец, мужчина", греч. *αρνεῖός* "самец барана" и т. пр. Потамоним Dignat/Diglat "река Тигр" происходит от и.-е. 'dig- "козел" (>арм. *шпн* "козел" > "бурдюк").

⁸⁷ Бертельс Е., Избранные труды. История персидско-таджикской литературы, М., 1960, стр. 62.

⁸⁸ «Կոտոր»-ի փոխաբեր հանդիպում է մակ «գրիամուր» քարգնամությունը (տե՛ս Fernand Comte, Larousse des Mythologies du Monde, Éditions France Loisirs, Larousse 2005, p. 137):

⁸⁹ ՀԱԲ, հ. I, էջ 477:

⁹⁰ Թ. Հակոբյան, Ստ. Մելիք - Բախշյան, Հ. Բարսեղյան, նշվ. աշխ., հ. I, էջ 614:

В противоборстве Энки-Абзу свое мифологическое отражение нашло действительное противоборство между рогатыми и змеями. Имя Abzu состоит из компонентов *ab-(<и.-е. *abh- "вода") и -zu (<и.-е. *g'hu арм. ձու-կ "рыба"). Другое название Абзу - Енгушта также и.-е. происхождения: *Eng-ur-<и.-е. *eng-(>арм. *ing-il->ինգիլ-շ "морское чудовище", латин. anguilla "угорь" и т. пр.).

Теоним Asalduhi, который носил сын Энки (впоследствии идентифицируется с вавилонским Мардуком), также и.-е. происхождения: As-ald-uhі ср. и.-е. *ans- "господин, господь" + и.-е. *eld-/ʾld- "мокрый, влажный" + и.-е. *ok²- "глаз, око" (здесь "исток, источник"). Имя водяных мифологических существ абгалов состоит из компонентов *ab-<и.-е. *abh- "вода" и *gal-<и.-е. *gel-/ʾgol-/ʾgʲ- "поглотить, пожирать". И.-е. *gʲ->арм. կալ-ը "крупная сильная собака", а *gol->կալ-ը "бобр". Таким образом, abgala означает "водяная собака", т.е. "бобр" или "выдра": ср. арм. քրշիկ "бобр", перс. sagābi "бобр, выдра", др. ирл. *dobor-chú "бобр" (все дословно "собака воды, водяная собака").